

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ձև 5)

(հազ.դրամ)

01 հունվարի 2009թ.-ից մինչև 31 մարտի 2009թ.

Ծանոթագրություն 1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2005թ. և հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը հանդիսանում է 1991թ-ին հիմնված «Հայկապ Բանկ» ՍՊԸ իրավահաջորդը: Բանկը գրանցվել է 20 սեպտեմբերի 1991թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N4 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժույթային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, թվով 12 մասնաճյուղ գտնվում են Երևանում, իսկ 13-ը՝ ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Պուշկինի 19:

2009թ.-ի առաջին եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմում էր 292 մարդ:

Ծանոթագրություն 2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Ֆինանսական հատվածում իրականացվող բարեփոխումները միտված են ենթակառուցվածքների զարգացման և անցումային շրջանի երկրներին բնորոշ ռիսկերի մեղմացմանը:

2008թ. վերջին «Moody's Investors Service» գնահատող միջազգային գործակալությունը Հայաստանին տվել է *Ba2* «Կայուն հեռանկար» անկախ գնահատականը: Համաձայն այս հաշվետվության՝ երկրի պետական պարտքերի փոքր ծավալները և վերաֆինանսավորման նվազագույն ռիսկերը թույլ են տալիս հիմնավորել ներկա միջավայրի կայուն գնահատականը: Հիմնական ֆինանսական ռիսկ է հանդիսանում նվազ եկամուտը, սակայն իրավիճակը մեղմում են պարտքերի մարման շատ վստահելի անցյալը, պաշտոնական վարկատուների հետ լավ հարաբերությունները, ինչպես նաև Սփյուռքի կողմից ապահովվող իրացվելիությունը:

Հայաստանում բիզնեսի կապիտալում օտարերկրյա կապիտալի փոքրածավալ ներգրավվածության, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեջ համեմատաբար քիչ օտարերկրյա ներդրումների և համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից կղզիացման արդյունքում, ավելի զարգացած և ձևավորված տնտեսությամբ երկրներում առկա ֆինանսական ճգնաժամը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այնքան էլ խիստ և նկատելի չէ Հայաստանում:

Հայաստանի կառավարությունն ուսումնասիրում է ճգնաժամի պատճառներն ու հետևանքները՝ մշակելու համար միջոցառումների ծրագիր՝ պայքարելու ընդդեմ այդ հետևանքների, երբ ճգնաժամը անխուսափելի դառնա Հայաստանի համար:

Շուկայական ավելի խիստ ճնշման պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Բանկը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Բանկի ակտիվների և պասիվների մնացորդային արժեքի վրա:

Հետևաբար, Բանկի ֆինանսական հաշվետվություններն ամեն դեպքում չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և վստահաբար չափելի լիներ Հայաստանում:

Ծանոթագրություն 3. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1. Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Սեկնաբանությունների՝ հաստատված ֆինանսական հաշվետվությունների Սեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

3.2. Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հինական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4. Վերադասակարգում և վերաներկայացում

Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

3.5. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Բանկն ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2008թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և նեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍԽ») և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Սեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից:

Տարեկան բարեփոխումներ 2008

«ՀՀՄՍԽ»-ի կողմից թողարկվել է՝ «Միջազգային ֆինանսական հաշվետվությունների Ստանդարտների Բարեփոխումներ 2008»-ը: Բարեփոխումների մեծ մասը կիրառելի են 2009թ.-ի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Դրանց կիրառումը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չեն ունենա:

Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ

հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

4.2.Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 մարտի, 2009	31 դեկտեմ. 2008
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	367.77	306.73
ՀՀ դրամ/1 եվրո	487.99	435.00

4.3. Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոզիտացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարծ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի :

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5. Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող փոխարժեքով, ինչը հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7. Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում

են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

4.8.Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

4.9.Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

4.10.Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Չետզման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Չետզման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Չետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում: Չետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11.Որպես գրավ դրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է հաշվեկշռում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Ձուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12.Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13.Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույթաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-3	33
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.14.Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար

ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն անորոշագրվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում՝ 1 ից 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Անորոշագրվող հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն անորոշագրվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

4.15.Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

4.16.Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են անորոշագրված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ անորոշագրվող ընթացքում:

4.17.Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված համակարգին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

4.18.Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտատպանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է անորոշագրված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.19.Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.20.Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.20. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

4.21. Սեզնետների ներկայացում

Սեզնետը Բանկի առանձնացնելի բաղադրիչ է, որը զբաղվում է առանձին ծառայության կամ ծառայությունների խմբի մատուցմամբ (բիզնես սեզնետ) կամ որը զբաղվում է ծառայությունների մատուցմամբ որոշակի տնտեսական միջավայրում (աշխարհագրական սեզնետ) և ենթակա է այնպիսի ռիսկերի և հատույցների, որոնք տարբեր են այլ սեզնետների ռիսկերից և հատույցներից: Սեզնետները, որոնց հասույթի մեծ մասը ստացվում է արտաքին հաճախորդներին կատարված վաճառքներից, և որոնց հասույթը, արդյունքը կամ ակտիվները կազմում են սեզնետների տաս կամ ավելի՝ տոկոսը ներկայացվում են առանձին: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեզնետները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

Ծանոթագրություն 5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ ԿԲ, պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով:

Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարվում են փոփոխություններ և լրացումներ: Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային և իրավական պարտավորությունները:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը:

**Ծանոթագրություն 6 «Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ**

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Տոկոսային եկամուտ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	2,964	9,972	46,466
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից	454,148	340,577	1,679,956
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	48,525	65,729	306,011
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	5,384	32,079	67,694
Այլ տոկոսային եկամուտ	-	-	-
Ընդամենը	511,021	448,357	2,100,127

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	80,225	35,735	199,340
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	129,680	107,525	383,261
Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	9,000	4,534	25,584
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	23,301	5,586	93,929
Այլ տոկոսային ծախսեր	3,126	1,550	11,794
Ընդամենը	245,332	154,930	713,908

Ձուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	265,689	293,427	1,386,219
--	----------------	----------------	------------------

**Ծանոթագրություն 7 «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ**

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Դրամարկղային գործառնություններից	7,497	16,139	71,620
Հաշվարկային ծառայություններից	40,178	22,600	137,208
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնություններից	1,024	3,803	19,659
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	487		150
Վճարային քարտերի սպասարկումից	17,711	6,717	48,636
Այլ կոմիսիոն վճարներ	4701	1368	5,667
Ընդամենը	71,598	50,627	282,940

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսյոն վճարներ	2,935	11,878	23,267
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	10,834	-	28,251
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	-	-	-
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	952	5,301	17,623
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	11368	-	32,695
Այլ կոմիսիոն վճարներ	5,913	8,289	1,493
Ընդամենը	32,002	25,468	103,329
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	39,596	25,159	179,611

Բանկը 2008-2009թթ. շահաբաժիններից եկամուտ չի ստացել:

Արտարժույթային գործառնություններից զուտ շահույթ

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	48,748	97,361	351,975
Ընդամենը	48,748	97,361	351,975

Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	17,809	22,268	17,191
Ընդամենը	17,809	22,268	17,191

**Ծանոթագրություն 8 «Այլ եկամուտներ»
Այլ գործառնական եկամուտ**

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	-	4,736	13,859
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	-	3,741	15,826
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	1,174	672	3,302
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-	-

		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-	804
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-	-
Արտասովոր եկամուտներ (առկայության դեպքում)	-	-	-
Այլ եկամուտներ	14,222	10,820	2,887
Ընդամենը	15,396	19,969	36,678

Ծանոթագրություն 9 «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ»

Բանկերի նկատմամբ պահանջների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Սկզբնական մնացորդ	-	221	221
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	221	221
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	(221)	(221)
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Սկզբնական մնացորդ	128,932	91,689	91,689
Պահուստին կատարված			

մասնահանումներ	(148,528)	(25,646)	(275,592)
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	158,833	40,886	308,911
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	10,305	15,240	33,319
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	281	194	5,424
Պահուստի օգտագործում	(1,634)	-	(1,500)
Վերջնական մնացորդ	137,884	107,123	128,932

Ներդրումների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2007.- 31.12.2007
Սկզբնական մնացորդ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Այլ ակտիվների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Սկզբնական մնացորդ	861	1,520	1,520
Պահուստին կատարված մասնահանումներ	(27,824)	(27,824)	(48,158)
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	28,428	31,879	45,286
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	604	4,055	(2,872)
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	2,213
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	1,465	5,575	861

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Սկզբնական մնացորդ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումներ	-	-	-
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	-	-	-

Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-	-
Նախկինում հաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-	-
Պահուստի օգտագործում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-

Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին	10,909	19,074	30,226
--	---------------	---------------	---------------

Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում և ծանոթագրություններում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների, ինչպես նաև հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ընդհանուր պահուստները չեն ճանաչվել:

Ծանոթագրություն 10 Անձնակազմի գծով ծախսեր

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	150,216	101,711	504,301
Ծախսեր սոցիալական ապահովության պետական հիմնադրամին հատկացումների գծով	17,396	11,761	58,471
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	-	-	21
Ընդամենը	167,612	113,472	562,793

* 2009թ. առաջին եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 292 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը` 162 հազ.դրամ:

* 2008թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 283 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը` 209 հազ.դրամ:

Ծանոթագրություն 11 Այլ ծախսեր

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	55,120.00	9,650.00	20,075.00
Գործուղման ծախսեր	1,598	2,087	14,514
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	24,414	9,338	61,484

Ապահովագրության գծով ծախսեր	-	-	1,063
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	10,509	13,989	34,143
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	23,416	14,128	63,719
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	2,292	-	13,168
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	11,821	9,888	51,086
Տրանսպորտային ծախսեր	2,504	3,379	13,638
Ծախսեր հարկերի (բացառությամբ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	11,389	11,192	60,773
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	3,457	3,077	20,029
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	605	469	3,227
Վճարված տուգանքներ և տույժեր	-	666	1,200
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	10,642	9,766	39,920
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	9,410	8,022	78,369
Այլ ծախսեր*	9,464	14,394	42,048
Ընդամենը	176,641	110,045	518,456

* Այլ ծախսերը հիմնականում առաջացել են ԱրՔա-ի գծով գործառնական ծախսերից:

Ծանոթագրություն 12 Շահութահարկի գծով ծախս

	01.01.2009.- 31.03.2009	01.01.2008.- 31.03.2008	01.01.2008.- 31.12.2008
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	7,000	6,443	154,605
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները		-	-
Չետաձգված հարկի գծով ծախս	(519)	5,461	(5,162)
Ընդամենը	6,481	11,904	149,443

	01.01.2009.- 31.03.2009	Արդյունավետ դրույթաչափ (%)	01.01.2008.- 31.12.2008	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	(7,522)	-	741,084	-
Շահութահարկ` դրույթաչափով	(1,504)	20	148,217	20
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	(3,513)	-	(3,165)	-
Չնվազեցվող ծախսեր	11,499	-	4,391	-
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս	-	-	-	-
Ընդամենը	6,481	-	149,443	-

	Մնացորդը 31.12.2008թ. դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը 31.03.2009թ. դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում`	12,171	4,436	-	16,607
Առևտրային նպատակով պահվող արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	-	-	-	-
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	-	-	-	-
Ստեղծված պահուստների գծով	12,171	4,436	-	16,607
Այլ պարտավորությունների գծով	-	-	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում`	7,179	3,917	-	11,096
Առևտրային արժեթղթերի գծով	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի գծով	-	-	-	-
Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
Այլ ակտիվների գծով	1,919	5,458	-	7,377
Այլ պարտավորությունների գծով	5,260	(1,541)	-	3,719
Ջուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	4,992	519	-	5,511

Ծանոթագրություն 13 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	01.01.2009.- 31.03.2009.	01.01.2008.- 31.03.2008.	01.01.2008.- 31.12.2008.
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	(14,003)	178,545	580,872
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	(14,003)	178,545	580,872
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,072,401	774,115	798,260
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	(0.01)	0.23	0.73
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	-	-	-

Ծանոթագրություն 14

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	31.03.2009.	31.12.2008.
Կանխիկ դրամական միջոցներ	1,095,758	639,344
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	266,446	278,360
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	5,565,554	9,342,482
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	143,882	263,907
Հաշվեգրված տոկոսներ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվներից և ավանդներից	-	-
Ընդամենը	7,071,640	10,524,093

*31.03.09թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 1 656 679 հազ.ՀՀ դրամ:
31.12.08թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը, որը կազմում է 1 772 135 հազ.ՀՀ դրամ:

**31.03.09թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 143 882 հազ.ՀՀ դրամ:
31.12.08թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 263 907 հազ.ՀՀ դրամ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում

	01.01.2009.	31.03.2009.	01.01.2008.	31.12.2008.
Կանխիկ դրամական միջոցներ	652,707	1,095,758	529,562	652,707
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	264,997	266,446	237,256	264,997
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	9,342,482	5,565,554	3,161,158	9,342,482
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-	450,170.0	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	263,907	143,882	114,037	263,907
Թղթակցային հաշիվներ ՀՀ բանկերում	3,964	1,515	8,780	3,964
Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում	608,787	668,293	473,737	608,787
Ընդամենը	11,136,844	7,741,448	4,974,700	11,136,844

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ

	31.03.2009.	31.12.2008.
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	-	-
Հուշադրամներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 15 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	31.03.2009.	31.12.2008.
ՀՀ բանկերում	1,515	3,964
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում	642,283	608,768
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում	26,010	19
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	669,808	612,751
Միջբանկային վարկեր և ավանդներ	-	-
ՀՀ ԿԲ-ում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
-այլ	-	-
ՀՀ բանկերում՝	7,105	13,716
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	7,105	13,716
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում՝	2,942,160	13,363
- վարկեր և ավանդներ	2,942,160.0	-

- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ այլ*	-	13,363
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում՝	-	-
